



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար 12 ծր.
Տարեկան 6 " "
Վեցամսեայ Արսասանականի համար 15 " "
Վեցամսեայ 8 " "

Աւերիկայի համար 3 ծր.
Տարեկան 4.50 " "

Իսկանդրական տող ստաբիլի երեսին համար 40 սիսի վերջին երեսին համար 20 սակերիս է երեսին անցի անգլաներու համար 20 0/0 գեղջ կըշշայի
Վասնայի համար 8' ուրի 10 սակերիս

ՇԱՐՄԻ

Նամակ և գրամ գրիկի
Միլիարդներու հաս-
ցիկն .

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“

R. P. Kalémcarian, Mechitharistengasse
(Autriche) W. 4. Vienne
Varna (Bulgarye)

Արսասանականի համար
ձեռքի (20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար
ձեռքի (15 ՍԱՆԹԻՄ)

ՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂՈՒՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՐՐԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՅԹԻ ԵՒ ՇԱՐՄԻ ՕՐԵՐԸ

Գրութիւնք ևս չեն տրուիր

«ՇԱՐՄԻՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ՆԱՆՆԻ

ԱՆՆԻԿԻՆ

Նաննի, նաննի, նաննի քեզ
Կ'երգեմ տըխուր, սրտակէզ,
Դառնը հոգիս միշտ, խըրով՝
Վըրէժ, քէն ու սխերով, նաննի :

Քընի՛ր հանգիստ գուն մուշմուշ,
Անմեղ զանուկ իմ անուշ,
Քանի դուն դեռ ծանօթ չես
Հայու բազդին սեւ երես, նաննի :

Քընի՛ր անվիշտ, քընի՛ր դուն՝
Անբիծ ճակատով զըւարթուն,
Նիրհը քեզ տայ նոր աշխոյժ,
Դեռ մաքուր ևս, մատղայ յոյժ,
Նաննի :

Սիրող, հոգիդ վիշտ չունին՝
Նըման երկնից թռչունին,
Նիրհէ՛, նիրհէ՛ միշտ անուշ,
Անթեւ սատրակ դուն քնքոշ,
Նաննի :

Ծաղիկ թերթեր քեզ վերմակ,
Բո՛յր երազներ քեզ ճերմակ,
Հոգիդ խորան անքընին՝
Սիրոյ անուշ պաշտումին, նաննի :

Ննջ՛ աննոց այժմով գէթ՝
Ժըպիտ կախուած շրթունքիդ,
Օր մը քունը քու խաղաղ
Կը խանգարուի սլ աւաղ, նաննի :

Նիրհէ կակուզ ծածկի տակ,
Պահ մը ապրէ՛ անցիտակ,
Որ հայ ցաւեր ծայր չունին,
Հայ մանկիկներ մայր չունին, նաննի :

Ննջ՛ հանդարտ քանի դեռ
Թըլիզ բացուած են վարդեր,
Շուտ կը վըզէ ցուրտ հիւսիս,
Ու գուն կեանքէն կը հիւժիս, նաննի :

Մանկութիւնը կ'անցնի շուտ,
Վշտի կեանք կայ մտաւորտ,
Ուր կը սեւնան ալ համակ՝
Երազները քու ճերմակ, նաննի :

Շուտ կը մեծնաս, կիմանաս
Սեր կըրած վիշտն ու վընաս,
Եւ կը հասնին մինչեւ քեզ
Սեւ սեւ լուրեր աղէկէզ, նաննի :

Սըզուր կը բռնուի նըրբակ
Կուզայ երկրէն աւերակ,
Եւ ինձ նըման մորմոքիս,
Ո՛վ իմ կեանքս, ո՛վ հոգիս, նաննի :

Պժտախտ ազդիդ դարդ ու սուգ՝
Կը խըլեն դառն արտասուք՝
Սշուկներէն քու սղորո

Կը հեծկտաս գուն մի օր, նաննի՛
Սակայն մի՛ լար, դուն մի՛ լար,
Այդ չէ՛ ճամբան փրկարար,
Սեւ աչերըդ թող վառին՝
Բոցերովը կըրուին, նաննի :

Ասելովիւն, զայրոյթ, թոյն
Թող տիրեն մեզ, մեր հոգւոյն,
Կըրու, գէնք, մահ մեր միակ
Սուրբ եւ արքայ նպատակ, նաննի :

Օրոր, օրոր, օրոր քեզ
Կ'երգեմ տըխուր, սրտակէզ,
Դառնը հոգիս միշտ խըրով՝
Վըրէժ, քէն ու սխերով, նաննի :

Վ. Է. Տ. Ա.

ՍԿՍՎՈՒՄ Է

Խուրք կառավարութիւնը բան-
տերից ազատում է Մակեդոնացի
քաղաքական բանաստեղծներին,
աքտրեալներին, իսկ սբանց մէջ
զանազան յեղափոխականները եր-
կիր հասնելով, կրկին միանում
են ապստամբ հրոսախմբերին,
որոնք արդէն սկսել են երեւան
զալ Մակեդոնիայի դանազան
անկիւններում: Մօտ օրերում
Սարաֆով և Սայել մեծ ընդհա-
րումներ են ունեցել թուրք զօր-
քերի հետ և բաւական լուր գաս
են աւել Սուլթանի բռնութեան
նեցուկներին:

Պայքարը սկսվում է. և այս
անգամ ոչ աշնան վերջերին, այլ
գարնան սկզբին: Ուրեմն երկա-
րասեւ պէտք է լինի նա. մին-
չեւ ձմեռ պէտք է տեւէ, եթէ
իսկապէս մակեդոնացի ժողո-
վուրդը որոշել է ապստամբու-
թեամբ ձեռք բերել իր ազատու-
թիւնը և ապստամբութեան վա-
րիչները լուրջ պատրաստութիւն
ներ ունեն իրենց արիւնոտ պայ-
քարը երկարացնելու և ամիսներ
ստեւել աւալու համար:

Ուրու և Աւստրիացի քաղա-
նած դիւանագետների մրտաժ-
կովները մնում են մեռած սառ,
Մակեդոնացի ապստամբապետ-
ները ուսնակոխ են անում այն

սպաննալիքները որ մակեդո-
նիայի սահմանների մօտ, Բուլ-
գարիոյ մայրաքաղաքում որոտաց
Համագործը յայտարարելով գո-
ռոշաբար, «Ես եկել եմ խոր-
հուրդներ տալու, իմա՛ հրա-
մաններ, և ոչ թէ խորհուրդներ
լսելու համար»:

Ու ուսաց ինքնակալի գոռոզ
նախարարը անշուշտ փափուկ
բազկաթռու մէջ ընկողմանած իր
ատամներն է կրճատ: ցնում այն
յանդուզն քայլի հանգէպ, որ
գործ է դնում բուլգարական մի
Մակեդոնացի համեստ սպայ ոտ-
նակոխ անելով երկու կայսրների
և նրանց շնիկների տրամադրու-
թիւնները, չգատէրները և խոր-
հուրդները:

Ո՛րչափ մեծ զօրութիւն ունեն
յեղափոխական գաղափարը և
անձնւիրութիւնը. նրանք հա-
սարակ մահկանացուներին վերա-
ժում են կայսրների ախոյեաննե-
րի և նրանց ստիպում են իրենց
կայսերական վեհ թուլութեան
մէջ գաղալ բարկութիւնից ու
զգալ որ կայսրներն անգամ չեն
կարող հայրենասէրներին ընկ-
ծել:

Յեղափոխական բոցի լեզուները
երեւում են Մակեդոնիայի ծայ-
րերում և թերեւս հեռու չէ մեծ
հրդեհի օրը. հրդեհ, որը կամ
կը բռնկցնէ ամբողջ Եւրոպան և
կամ թէ կը խորտակէ Մակեդոն-
իայի գերութեան շղթան:

Ինչպէս վերը ասացինք, մա-
կեդոնական ապստամբութիւնը
կարող է երկար տեւել, մինչեւ
ձմեռ. իսկ տեւական ապստամ-
բութեան հետեւանքը հաւանա-
կան է որ լինի Եւրոպայի միջա-
մտութիւնը այդ խնդիրը վերջ-
նապէս կարգադրելու համար:

Յրանսան տրամադրութիւններ
է ցոյց տալիս և հայկական խնդ-
րի մասին հողալ, անշուշտ Անգ-
լիան էլ նորն տրամադրութիւնը
կունենայ: Իայց այդ տրամադ-
րութիւնը բաւական չէ. հայերս
էլ պէտք է մեր կորովը, մեր ա-

զատութեան բաղձանքի չափը
զէնքով ցոյց տանք: Ի՞նչք էլ
պէտք է Մակեդոնացիների պէս,
նրանց խնդիրը լուծման փուլի
մէջ մտած միջոցին, զէնքով և
արիւնով յայտարարենք մեր գո-
յութիւնը և մեր ազատ ապրելու
կամ ազատ մեռնելու ծարաւը
ցոյց տանք:

Մենք էլ ունենք յեղափոխական
կազմակերպութիւններ որոնց նըւ
պատակն է եղել և է քաղաքական
յարմար պարագայում մեծ ապս-
տամբութիւն առաջ բերել: Այ-
սօր այդ կազմակերպութիւններից
մէկը «Հնչակեան» է, այս քաղա-
քական երկունքի վայրկեաննե-
րում, կազմալուծվում է ամենա-
մեծ խայտառակութեամբ յայտա-
րարելով հայ ժողովրդին որ իր
յեղափոխութեան համար տաժ-
դրամները ծախսված են սմեռա-
յիմար բաների և աւենաան-
պէտք անձնաւորութիւնների հա-
մար: Ուրեմն այդ կազմակեր-
պութիւնից ապստամբական ու է
գործ սպասելը կատարեալ յիմա-
րութիւն կը լինէր:

Մնում է Հայ Յեղափոխական
Դաշնակցութիւնը: Հայ ժողովրդի
միակ յոյսը այժմ դրա վրա է:
Դաշնակցութեան վարիչները
պարտաւոր են ամեն ճիգ թա-
փել որպէսզի յարմար լուպէին
հայերս էլ կարողանանք սուրբի
չաչիւնով և գնտակների սուլոցով
ներկայանալ Եւրոպական արիօ-
պագին մեր բաժինը պահանջե-
լու համար:

ՎԱՐԴՈ

Վ Ր Ի Պ Ա Կ

Ի՞նչ 498 «Շարժում»-ի մէջ
ճումլայէն հրատարակուած նա-
մակի տառիկն սխնակի 49րդ.
տողին մէջ փոխանակ «աւելի
գումարներու» պէտք է կարգալ
«աւելի քիչ գումարներու». իսկ
երկրորդ սխնակի 5րդ. տողին
մէջ փոխ սնակ «վերաբերող»
«չը վերաբերող»:

ՈՒՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

—0—

Ռուսաց քաղաքին մէջ, Դոն գետին վրայ, ահագին ամրոյս մը կարծր դրոշակը ծածանելով անցեր է քաղաքին մէջ տեղէն, Ուստիանու թիւնը ցուցարարները ցրւելու է, որոնք միջոցին բնագարում տեղի ունեցեր է ամրոյսին եւ ուստիանու թեան միջուկը: Եստ վերաբերեալներ կան, որոնցմէ ուստիանու սոյա մը ծանրապէս վերադարձած է: Երկու թեան հարկ կարգը վերաճատատուներ է:

Ռուս յեղափոխական միացած կուսակցութիւններու Բեթէրպոլի կեդրոնական կոմիթէն հանդէպ Չարին՝ բարենորոգումներու մասին, արուած հրովարտակին, յայտարարութիւն մը ցրուել է, որուն մէջ ի միջի այլոց եւ հետեւեալը կտուի:

Վերջոյ ի վեր Ռուսիան դադարած է հաւատ ընծայել իշխողներու խօսքին: Ռուսիա գործ կուղէ եւ ոչ գատարակ խօսքեր: Մամուլը խղճուած է է, աւան մէկ ազատ խօսքին կը հետեւի բանարկութիւնը եւ Միպերիա աքսորուը, այնպէս որ ազնուականութեանց այն ազնու պարագլուխները անգամ, որոնք կտարութեան ձեռքով կազմած ժողովներու մէջ համարձակեցան գիշարներուն վրեժակին մասին խորհուրդներ խօսիլ, յանգիմանեցան:

Ռուս ժողովուրդը կը սնդէ իր հետեւեալ պահանջներուն վրայ: «Ռոսքի եւ մամուլի ազատութիւն, անկախ դատաստիներ, վարչութեան վրայ թոնթոյլ, օրէնդիր ժողով մը կազմուած ժողովիցէն ընտրուած ներկայացուցիչներէ եւ վերջապէս ազգային ժողով մը»:

Ուրեմն պարզապէս կերեւի որ Յարին բարենորոգումները բաւարարութիւն չեն տար որոս յեղափոխականներուն եւ անոնք որոշած են իրենց մաքառումը շարունակել մինչեւ որ ուստական միապետութիւնը գոնէ սահմանադրական թագաւորութեան վերածուի: Յարին խորհրդականները անշուշտ մեծ վտանգներ տեսան որ խորհուրդ տուին իրենց վեհապետին գոնէ քիչ մը մեղր քաղ զժողով տարին շրթունքներուն: Բայց միշտ համը անոնցները ինչպէս կերեւի այդ քիչովը աւելի պահանջկոտ ու խիզախ պիտի դառնան:

Բ.

Վեհապետ ընկերակարական Լուսովիկ Գուչիկի Բարիպի մէջ դասախօսութիւն մը կարգացել է սուսական լեհ ընկերակարականներու մասին եւ անոնց դանդաղ գործունէութիւնը դատապարտելով, հետեւեալը ասելուց արեւմտէն, հետեւեալը ասելուց արեւմտէն յեղափոխականներու մասին:

«Մինչդեռ Լեհաստանի մէջ բացի քանի մը գործադուլներէ եւ ցոյցերէ յեղափոխական հոսանքը լքացած, զայն անմ կերեւի, Ռուսիոյ մէջ ընդհակառակը այս վերջին հինգ տարիներու ընթացքին մէջ այնքան ուժգին է որ կողովէ ես ընկած անկիւնները իսկ:

Ոչ միայն քաղաքակրթական կեդրոններու, այլեւ անհանուու վայրերու մէջ իսկ յեղափոխական գաղափարը իրեն համար ճամբայ կը բանայ: Ուստիական ցոյցերը գրեթե իրենց նշանակութիւնը կորցուցած են հանդէպ ժողովրդային

այն մեծ յուզումներուն, ինչպիսին էր Ռուսօվի յեղափոխական միթիւնը, որուն մասնակցեցան մօտ 30000 շողիներ: Հապօ գիւղական ըմբոստութիւնները, ազէմթիւններու, բողոքումները, զօրքերու անհնազանդութիւնը իրենց մեծերուն եւ վերջապէս՝ տէրօրակ ան յաճախակի կրկնուող փորձերը:

Երբ մարդ կը մտածէ թէ միայն Սրիադին, Նախարար մը, կրցեր է 60000 հոգի քաղաքակրթ յանցաւորներ աքսորել եւ պատժուած ուսանողները մերժած են ֆրեյ՝ արուած ազատութիւնը, փոխարէն ունէ զգլուծի, երբ մարդ կը մտածէ թէ կառավարութիւնը իր բոլոր հնարքները հասցուցած, ի դուր կաշխատի խաղաղ միջոցներով կացութեանը յարմարելու, շատ կը զարմանայ այն արագութեան վրայ, որով ուստ ժողովուրդին գիտակցութիւնը կը զարթի, տպաւորութիւնը կունենայ թէ ոչ մէկ հեղինակութիւն պիտի կարենայ յեղափոխութեան արեւկան ընթացքը կասեցնել:

ՕՏԱՐ ԴՊՈՅՆԵՐ ԾԵՐ ՄԵՋ

Ինչ է կրօնական այս հաստատութիւններու նպատակը—ընդհանուր մարդկայնութիւնը բարոյի, տգէտ ժողովուրդներու մէջ քաղաքակրթութիւն եւ գիտութիւն տարածել: Օճ, անոնց նպատակը շատ նեղ է—անոնք կուզան կրօնական պրօպագանդի համար, եւ ինչ ընեն: Բազմակիր Ներպայի մէջ պետական օրէնքներով սահմանափակուած է անոնց իրաւունքները, ուստի պէտք է հայրենիքի մէջ անպէտք գարձած ապրանքը քելի հոն: Ար գիտութիւնը դեռ չէ լուսաւորած միաքերը:—Պղտար շուրի մէջ ձուկ որսալը դիւրին է: Մանաւանդ վերջերս կրօնականներու ոտնձգութեանց դէմ Ներպայի մէջ կը մղուի եռանդուն կռիւ: Փրանսուական կառավարութիւնը գոցեց կրօնական միաբանութեանց դպրոցները: Դեռ նոր է Վերջինի դպրոցական հարցը: Այս սեղի եպիսկոպոս Կորուստի գիւղից իր հօտի գաւակներուն յամախել աղջկանց պետական բարձրագոյն դպրոցը, որովհետեւ դա հաստատութիւն մըն է առանց—դաւանանքի: Եւ այսօր նա ստիպուած եղաւ իր արգելքը վերցնել ու խօսքը ետ առնել: Գաղափարի թրեւումաքի մէջ երկրորդական եւ բարձրագոյն դպրոցներու մէջ ընդհանրապէս չաւանդուի կրօնքի դաս: Տեղ տեղ աւելի յատուալ գացած են: Այսպէս Զուրիցի իրոյ զանազան կառուցումներ ժողովրդ. տարրական դպրոցներու ծրագրէն դուրս ձգուած է կրօնքի դաս աւանդութիւնը—օրինակ Գլաբուս եւ ժընեւ: Անցիպետի մի պատար իր աշակերտներուն կը զանգատէր, թէ Գլաբուսի մէջ փոքրիկները հիթա նստներու պէս կը մեծան:

Սակայն թմբուկի ձայնը հեռուէն անուշ կո գայ: Մեր ծնողները չլա նալով Ներպայցի անունէն շատ զերաւ պատրաստ են իրենց երախաները յանձնել անոնց: Բայց չիթիլու չէ երուպական կաղաքակրթութիւնը երուպական կղերի հետ: Ներպայի մէջ կղերը գիտութիւններու եւ յառաջգիտութեան ամենէն կատարի հա-

կատարողը ու թշնամին է: Չէ, որ գիտութիւնը իրենց մեղուութիւնը երեւան կը հանէ, փաստերով կապացուցանէ իրենց քարոզութիւններու դատարկութիւնը: Բայց սողացող ճրճին անգամ կը մղէ գոյութեան կռիւն: Ինչո՞ւ այդ չընէ երուպայի կղերը: Բայց զժողովրդարար այդ կռիւը մեղմէ ալ կը պահանջէ իր զոհերը:

Կրօնական օտար հաստատութիւնները մեղ հայրուս համար ալ աւելի վնասակար են, ու այս զանազան անսակէտով:

Աւաջին, որ անոնց տուած դատարարութիւնը միակողմանի է եւ զուտ կրօնական: Մինչդեռ ուղիղ եւ առողջ դատարարութիւնը պէտք է լայն բազմակողմանի եւ հաստատուած գիտական հիմունքներու վրայ ու ոչ թէ կրօնական:

Հակառակ այն մանկավարժութեան, հակառակ ամեն հոգեբանութեան կրօնի արեւմուտքի ուսուցիչները իրենց յանձնուած խեղճ երախաներուն, այս կը սորվեցնեն օրը վեց անգամ աղօթել, կը սորվեցնեն օտար եւ անմարտի լեզուով թոթակօրէն մի քանի աղօթքներ, սուրբ գրական գլուխներ զոյ արտասանել: Բայց այս ամենէն ինչ օգուտ երբ անոնք երկնց հիւանդոս ետանցը յոգեցնելու համար կը շարձարեն մատաղ գլուխները կը բխցնեն դեռ չը կազուած միաքեր անհասկանալի նիթերով, կուսանեն մանկական կայստա հ գին:

Երկրորդ օտարները անտեղեակ մեր պէտքերուն եւ պայմաններուն, ան հարող են մեր գաւակները կեանքի համար պատրաստել: Երրորդ անոնց դատարարութիւնը չէ սղգային, այլ օտար: Ուստի մեր ծնողները մեծ սխալ կը գործեն ու կը մեղանշին իրենց գաւակներուն դէմ: Երբ հայ փոքրիկները կը յանձնեն ֆրանսայի կամ գերմանացի կրօնականներու:

Հայերս հոս ալ կը գտնուինք մի անընական գրութեան սլշ: Մեր գաւակները անոնց օտար զրկելով կարելի է չեզոքացնել օտարներու վատ ազդեցութիւնը: Հապօ ինչ ընել այնքան որոշողները, որ նայ պէս կը գտնուին օտարներու ձեռք: Այս պարագային պէտք է ջանալ, որ որ բանոցներու ուսուցչական մարմինը հայերէ կազմուած ըլլայ, ինչ որ անշուշտ մեծ առաւելութիւն մըն է: Մեր բողոքական եւ կաթոլիկ սղգայիները կարող են հոս լուս Ժատարութիւն մատուցանել, որովհետեւ անոնց առջեւ միշտ բաց պիտի ըլլայ դաւանակից օտար դպրոցներու դռները:

Աւելի այմատական միջոց է շատցնել Հայկ. Որբանոցներու թիւը եւ մըցում սկսել օտարներու դէմ: Մենք իբրեւ տեղացիներ, ծանօթ պայմաններուն եւ պահանջներուն անտարակոյ մըցում մէջ կը տանինք յաղթանակ: Մըցելու համար պէտք է սակայն Լուսնը, պէտք է այնպէս Բայց ո՞վ պիտի աշխատի, հայ կղերը: Մըցարեւ մեր եկեղեցականներու եւ կեղծ վարչութեանց որոստիական գործունէութիւնը շատ թոյլ է:

Երուպայի կրօնականներ իր որբանոցները պահելու համար սաղի անդին պրօպագանդիստներ կը զրկէ, որոնք կը ձառեն, կը համոզեն, հասարակութիւնը, կը ցուցնեն մոգական լուստերով պատկերներ, կարծեցնեն ըն-

գարձակ շրջանակներու մէջ հետաքրքրութիւն պէտք իրենց գործը եւ այսպէս կը գտնեն մշտապէս նպատող համակիրներ:

Բայց ե՞րբ զրկած է մեր էջմիածիններ, պատրիարքարանը եւ կամ մեր որ եւ է սուղտրդարանը նմանօրինակ շարունակական պրօպագանդիստներ հայութեան ամեն խաւերուն մէջ, որ եպիսկոպոսը կամ վարդապետը շրջան է կատարած եւ մեր որբանոցներուն համար նպատակաւ հաւաքած, օտարագողի մարմիններ կազմած: Եստ ցանկաւոր է, որ մեր մէջ սկսէր եւ անոնց որբասիրական գործունէութիւն, եւ այս ամանց դաւանաքի խորութեան: Հայ Լուսաւորչակա՞ր, բողոքական եւ կաթոլիկ ձեռք ձեռքի առած պէտք է գործեն: Զատեր է մեղ կրօնական համոզման քի տարբերութիւնը, թող միացնեն մեղ մեր համագային շահերը, մեր այգային թշուտութիւնը...:

Թիւում ազգասէրի մը սպաւորութիւնը չը ձգելու համար պէտք է ըսել, որ ես ոչ թէ միայն օտարները օտար ըլլալուն համար վնասակար կը գտնեմ անոնց դպրոցական գործունէութիւնը, այլ աւելի մի շատ հոգեբանական եւ բնական պատճառով: Ըսէ՛ք, ինչո՞ք մ, կարելի է տաք եղիպոսի բոյսերը ուստական գործ կրթայի տակ տանել եւ անոնցմէ սղստու յուսալ:

Հասկնալի պատճառներով ո՛չ նոյնը այս հարցին մէջ: Մեր դաւակները չեն կարող օտար հողէ մը քաղել կրթական անունը, ժողովուրդներու բարօրութեան եւ դէպի լուսալ գարգացման մէջ մեծ գործուն մըն է դպրոցը: Ուստի մենք ամենայն լրջութեամբ պէտք է խորհնք այլ մասին եւ ընտրենք օգտակարը:

Ներկայ խորհրդածութիւնները ընելու մեղ մասնաւոր ատիթ սուսաւ «Ռուսոնեզ»ի գերմանական Որբանոցը:

Պատար վանդմանի այս հաստատութեան կողմէ Հ. Մայր տեղեկագիր մը պատրաստած է, որու բովանդակութեան համառօտ ամփոփումը մեր ձեռքը անցաւ: Հոն կը պատմուի, թէ վանդման թրքական հաւանքներէ յետոյ իր դպրոցին մէջ ինչո՞ւն է շատ մը հայ որբեր: Բայց ինչո՞ւ հարմուեցան հայերը: Այս հարցը առաջ կը դնէ գերմանացի կրօնաւորը եւ կը պատասխանէ հետեւեալ կերպով. որ մենք թարգմանաբար հոս առաջ կը ըլլենք: «Այս ատիթ պէտք է յիշել—կը գրուի այդ ամփոփման մէջ—որ հեղինակի իրերու վրայ ունեցած անընդհատ համեմատ «թրքական» հայերը իրենց «ոչ քրիստոնէական» ընթացքով պատճառ եղան իրենց թշուտութեան, եւ որ ամեն արդարադատ մարդու համար հասկնալի է թիւրքերու բարկութեան եւ ցատուին պատճառ դէպ իրան այս հպատակները...»

Ո՞վ դուք նաղվեցի մեծ վարդապետին սուր անեղքը: Ո՞վ դուք փորձեցի, որ պատմութեան համար կռիւ մղող ժողովուրդի մը ճակատագիրը այսքան թեթեւամտութեամբ կը հեզե՞ք: Եւ կը ծաղրե՞ք անոր թշուտութիւնը...:

ՄԱՐԶԳԵՏՈՒՆԻ

Չու իցերիա

ԿՈՒՉԵՆՔ Չ.ՐԻՔԸ ԿԱՐՄԱՆԵԼ

Հնչակեան ընկերներ
Այս հարցին, առանց վարա...

Երբ պահ մը աչքերնուս առաջ
բերենք հնչակեանութեան փա...

Ներկայ մեր գրութիւնը յայտ
նի է ամէն քիչ, շատ մտածող...

Ինչ մը զիրար հասկնանք, մո
տանանք իրարու առանց նկատու...

Ինչ որ զիրենք մի կողմ նե
տենք և ուրիշ երազներով ալ...

Մենք երբէ՛ք անձնատրու
թիւններու հետ պէտք չէ գործ...

Ահա այս է ամենէն վճռական
ու բարեբար միջոց՝ եթէ իսկա...

ԲՈՐԻՍ ՍԱՐԱՓՕՎ

ԹՈՎԱՍ ԴԱՎԻԴՕՎ

1897-ի ձմեռը պատիւը ունեցայ
Ռուսուկում ծանօթանալու Բորիս...

կամ Մակեդոնացի գործիչ Պետրովից
և առանց նեղ տեսնելու արդէն ձեր...

Մի քանի րոպէ շատ վերապահու
թեամբ վերաբերվեցի. սակայն նրա...

Մեր գործերը շատ փաս են գնում,
սկսեց Սարաֆովը. մենք ոչինչ չենք...

Դուք, հայերդ մեզինց աւելի լաւ
էք. ինչ մեծ գործ կատարեցիք անց...

Դրամ պէտք է, դրամ. դուք չէք
կարող երեւակայել թէ ես որչափ եմ...

Այդ ընդհատվող, կարճ հարցերին
ու խօսքերին պատասխանելուց յե...

Ինչ պէտք է մտածենք. աշխա
տում ենք ներկայ Բարեբարոյն կո...

Էհ, երկրի ժողովուրդը ի՞նչ
տրամադրութիւն ունի: Ես լսել եմ...

Այո, մի քանի տեղեր այդպէս
է եղել. բայց ժողովուրդը մեղաւոր...

Այսպէս երկար խօսելուց յետոյ
նոյն գիշերը Սարաֆովը բաժանվեց...

Այդպէս երկար խօսելուց յետոյ
նոյն գիշերը Սարաֆովը բաժանվեց...

Սպաների մէջ իրէպիստ մարդիկ
շատ քիչ են գտնվում: Բայց Մակե...

Սարաֆովի և վերջերս ուրիշ շատ
Մակեդոնացի սպաների հետ ծանօթա...

Սարաֆովի և վերջերս ուրիշ շատ
Մակեդոնացի սպաների հետ ծանօթա...

(Շարունակելի)

ԴԵՍԻՑ ԴԵՆԻՑ

Հնչակեան գործիչները կաշ
խատին իրենց կազմակերպու...

Դրամ պէտք է, դրամ. դուք չէք
կարող երեւակայել թէ ես որչափ եմ...

Այդ ընդհատվող, կարճ հարցերին
ու խօսքերին պատասխանելուց յե...

Ինչ պէտք է մտածենք. աշխա
տում ենք ներկայ Բարեբարոյն կո...

Էհ, երկրի ժողովուրդը ի՞նչ
տրամադրութիւն ունի: Ես լսել եմ...

Հնչակեան կարեւոր գործիչնե
րուն վրայ և անոնք պիտի զգու...

Անցեալ օր եւրոպական թեր
թեքը հաղորդեցին թէ Օրման...

Այս քանի երրորդ անգամն է որ
Սուլթանը խոստումներ կընէ...

Մեզի կը թուի թէ Օրման փա
շան ինքն ալ համոզուած է որ...

ԿԵՏ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

(Երբարեւանի ևստակ)
Ը ն կ ե ռ ն ե ռ,
Եւրոպայի Հայ Ռուսանողական...

Հաղորդելով Ձեզ այդ մասին,
խոնարհաբար խնդրում ենք՝

ա) Նեղութիւն յանձն առնել՝
գումարել տեղական ուսանողու...

բ) Կայացնել այդ ժողովում
պատգամաւորներ ընտ...

ներում իւրաքանչիւր 10 անգամի համար պիտի ընտրվի մի պատգամաւոր։ Աւելի պակաս անգամ ունեցող (ոչ նազ քան երեք) քաղաքները կարող են ուղարկել մի մի ներկայացուցիչ։

Գրա հետ միասին խնդրում ենք՝ ա) Բարեհաճել անդամագրել բոլոր ուսանողներին և գանձել անդամավճարները, և բ) Ուղարկել վերը յիշած տեղեկութիւնները կարգադրի Թանձնաժողովին՝ ոչ ոչ քան մարտի 15ը, որպէսզի կարելի լինի ժամանակին պատրաստել Համագումարի օրակարգը և Միութեան տեղեկագիրը։

Ընկերական բարեւանդով
ԿԱՐԿԱՂԻՐ ԹԱՆՁՆԱԺՈՂՈՎ
1903 Մարտ 1
Ժընէվ
Հասցէն
Իւնիոն սն գեթիւսիկն Արիկեիսն
սը շէոնօր. Ռիւ սը շէգոլ-սը -2ը մի. 2
Ժեկեկ Սիւիգ

ՊԱՏԱՍԻՍՆ ՄԸ

Տէր,
Յարգոյ լրագրիդ 498 թուին մէջ կար զեռեղուած մի լաց նամակ, ինձի ուղղուած, և ստորագրուած Մարտիրոս Տէր Բարսեղեան անուն անձէ մը։

Ի պատասխանի կուգամ ծանուցանել այն պարոնին որ՝ եթէ ինձի մի այդպիսի գումար տուած է՝ պակասագումար համար, դա արձանագրուած պէտք է ըլլայ տեղադրուած մէջ, միայն թէ գիտնալու է ինչ անունի տակ յանձնած է ինձ սոյն գումարն, որովհետեւ այն ժամանակ նորաձեւութիւն էր դարձած անուանախոսութիւն, իսկ եթէ «ձըրի է եղած պակասագումարը քան հանային մասն գումար մը տալով, այդ պարագային մէջ չէ կարելի գտնել տեղադրուած մէջ, այլ պէտք է գիմել քաղաքիս եկեղեցւոյ աւագերեց հօր, որ հարկաւ արձանագրած ըլլալու է ամուսնութեանց յուշարանին մէջ այն պարոնին անուն և ինչ անուն օրիորդի հետ տնտեսանալը։

Իսկ եթէ պարոնը զիս կը շնորհակցէ այն ժամանակի թաղական խորհուրդ Ատենապետ Մարգար Մինասեանի հետ, այդ չեմ գիտեր, որովհետեւ ես ասեանապետ չեմ եղած։

Յարգանք
Մ. Սուխանան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կառավարութիւնը իմանալով որ Ռուսիս կը շինուի, մեծ յուզումի մէջ է և հրամայած է որ սազմափորձեր տեղի ունենան։ Կը խօսուի որ զօրքերու գլխաւոր հրամանատարութիւնը պիտի

յանձնուի գերմանացի Գամբէնէր փաշային, իսկ երեկուան նախարարական ժողովին մէջ պիտի որոշուի որ նոր զինուորներ կանչուին դրօշակի տակ։

— Բարձ. Գրան ունեցած տեղեկութիւններու համաձայն նւէտական սպաները, որոնց պիտի յանձնուի ժամտարմըրին վերակազմել Մակեդոնիոյ մէջ, շուտով պիտի Պոլիս հասնին։

Կառավարութիւնը արդէն պատրաստած է բարենորոգումներուն կանոնագիրքը և շուտով պիտի ներկայացնէ ուսու սուստրիական գեսպաններուն վաւերացնելու համար։ Սուտ է որ Ռուսիս պահանջով Սուլթանը հրաժարած է Մակեդոնացի պաներ նշան կելու Մակեդոնիոյ մէջ իբր ժամտարմաներու պետեր, իրենք գերմանացիք մերժած են այդ պաշտօնները։

ՊՈՒԿԱՒՍ. ԻՍ. ՄԱԿԵՒՈՒՍ

Պուլկարիոյ նախարարական տաղանապը վերջացած չէ. իշխանը այժմ Սօֆիա կը գտնուի. բայց գեռ իրեն և Տանէֆին միջեւ համաձայնութիւն մը չէ կայացած նոր պատերազմական նախարարի ընտրութեան առթիւ։ Պուլկար թերթերը կը հաղորդեն որ իշխանը բացարձակօրէն, ներկայ պարագաներու մէջ, անյարմար կը համարէ Էմիլիոնի սպաներէն ու է մէկուն յանձնել պատերազմական նախարարին պաշտօնը։

— Կախարարներուն դատ կը շարունակուի կանոնաւորապէս։ Պարզաբանելու մնացել է վազօններուն գնումի խնդիրը, որուն մէջ կը մեղադրուին պ. պ. Թօնչէֆ և Իվանչօֆ։

— Ազգային ժողովի մէջ հարցապնդում եղաւ պ. Իվանչօֆին երկրագործական սնտուկէն իբր արտաքին գործոց նախարար փոխառած մէկ խոշոր գումարի մը մասին։

Նախարարապետ պ. Տանէֆ պատասխանած է որ այդ գումարը պ. Իվանչօֆ ընդունած է նախարարական խորհրդին որոշումով. կառավարութիւնը արդէն անորմէ հաշիւ պահանջած է և կը խնդրէ որ հարցապնդումը յետաձգուի, մինչև որ խնդիրը պարզուի։

— Բարիզի Սերպիոյ գեսպանը Մաթէնի թղթակցին հետեւեալը խօսած է Մակեդոնական խնդրի մասին։

«Կը մտածեմ որ Մակեդոնիոյ վիճակը հիմակ աւելի գէշ և աւելի վտանգաւոր է քան էր ուսուստրիական բանակցութիւններէն առաջ. Որովհետեւ յունկարէն սկսեալ պուլկար կոմիթէները

սկսան և միս ցեղերուն օգնութիւնը ստանալ։

Ի՞մ ստացած տեղեկութիւններու համաձայն Պիթոլիայի նահանգին մէջ հիմակ սերպերը, յոյները, ումէնները միացած են պուլկարներուն։ Ա.Ֆենէն կարեւորը այն է բոլոր ցեղերուն կիներն ալ կը մասնակցին և ամենակոտորուն գործակատարներն են. ա՛նոնք զէնք կը տեղափոխեն և մեծ յաջողութեամբ պրօպագանդ կընեն։

Ուրիշ աւելի հետաքրքիր վիտտ մը կայ. իրենք մահմետականները կոմիտէներու համար զէնք և ուսեստի պաշար կը տանին։

Հրոստիւմբերը, թէև քիչ հոգիներ է կազմուած, բայց բազմաթիւ են, ու շատ շարժուն, բայց անոնց կարեւորութիւնը անիլ կը զօրեղանայ, որովհետեւ իրենց առաջնորդները են գիւղական քահանաները և ուսուցիչները։

Հիմակուան շարժումները թրքական վարչութեան դէմ չեն։ Լաւ թրքական վարչութեանը մը յեղափոխականները չը պիտի գահացնէր, Պուլկար կոմիտէները, ինչպէս և անոնց միացած միւս քրիստոնեաները, կուզեն իրենց բաղդին տէրը ըլլալ, առ պատճառով ալ դժուար թէ բարենորոգումները երկիրը խաղաղցնեն։

— Լօնտօնէն կը հեռագրեն որ մեծ պետութիւններու համաձայնութեամբ պեղծիգական տաս ըսպաներ Մակեդոնիոյ ժամտարմաներու պետեր նշանակուած են։

ՌՈՒՍԻԱ

Բեթերսպուրկէն կը հեռագրեն թէ Յարը հրամայած է որ Սերպիոյ նուիրած տաս միլիոն փամ. փուշտները չը յանձնուին մինչև որ Պալքաններու մէջ վիճակը խաղաղի։

Ա Ն Գ Լ Ի Ա

Լօրտ 2էմպլըրէն Թրանսվալէն վերադարձաւ Լօնտօն և ժողովրդի կողմէն մեծ ողբերութեամբ ընդունուեցաւ։

— Անգլիոյ կառավարութեան, երեսփոխանական ժողովի մէջ, առաջարկուեց է Պարսկաստանի մէջ Ռուսական ստնձգութիւններու մասին, փոխանակ Պարսից կառավարութեան հետ բանակցելու աւելի լաւ է որ ուղղակի ռուս կառավարութեան հետ բանակցուի։

Կառավարութիւնը վաճառականական նոր գաշիւքներ կապելու համար ժողովուրդը հրաւիրած էր իր ձայնով որոշելու մաքսային սուրքերու չափը։ Այդ նոր թարիֆան հովանաւորող բնաւորութիւնը ունի 316,588 հոգի ձայն տուեր են ի նպաստ կառավարութեան նշանակած չափին. իսկ 222,819 ձայն մերժեր են։

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՎԱԶԻԷՆ. — ԵՐԻ ԲԱՆ

Բանաստեղծութեանց, ազգային, յեղափոխական, ժողովրդական և սիրային երգերու այս ճոխ հաւաքածոն մինչև հիմայ նմանօրինակ հրատարակութեանց ամէնքը կը գերազանցէ։

Բաղկացած է 600 մեծսփիւր երեսներէ. զարգարուած է ընտիր թուղթի վրայ տպուած հայ նշանուոր դէմքերու գեղեցիկ պատկերներով։

Քանի մը անձերու անհատական ջանքերով Ամբրիկայի մէջ լոյս տեսած այս կարեւոր հրատարակութեան ամբողջ հատոյթը, յատկացուած է զուտ բարեօրական գործի մը։ Կարծէ որ ամէն հայ ունենայ այս գիրքէն հատ մը իր տուն մէջ։

Պուլկարիոյ համար մասնաւոր զեղծ եղած է և կը վաճառուի համեմատաբար աժան գինով, ոսկեղրամ 5 ֆրանսի։ Փօստի ծախքը գնողը կը վճարէ։

Գրեք իր փափաքողները կրնան գիմել Կ. ՊիՌՈՒՆԱՆԻ, ուսուցիչ ի Ֆիլիպէ։

Ա. Ր. Մ. Է. Ն. Ի. Ա.
Լ. Ի. Ա. Ն. Ի.

(Հեղինակի պատկերով և ինքնակենսագրութեամբ)

Գրեց
Պ. Տօնապետեան

Գրեց
2 1/2 շիլին 1րբ. 25 կոպ.

3 ֆր. 60 սանթ

Գրեւ աշխատատիրոջին.

117 Կոստօֆիկ Բօս
Հէրիէրս'ս Բոսֆ
Լօսօսի Մ.

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна